ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«26» սեպտեմբերի 2018 թ. N 220-Ա

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 159-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Արմենուհի Մկրտչյանի դիմումը՝

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմենուհի Մկրտչյանին տրամադրել 2018 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ից հոկտեմբերի 26-ը ներառյալ:

2.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները 2018 թվականի հոկտեմբերի 1-ից հոկտեմբերի 26-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Վարդան Գևորգյանի վրա:

3.Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի հոկտեմբերի 29 -ին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
ք.Գավառ